

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
ԲԱՑԱՏՏՐԱԳԻՐ

Աշխարհագրության խբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանում, ժամաքանակ
2. Նպատակները
3. Խնդիրներ
4. Վերջնարդյունքներ
5. Բովանդակություն

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը: Ծրագիրը նախատեսված է 6-12 –րդ դասարաններում սովորողների համար: Խմբակում ընդգրկված են 9-15 սովորող: Պարապմունքների անցկացման ձևը՝ խմբային: Ուսումնական գործընթացը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդման միջոցով: Պարբերաբար կազմակերպել էքսկուրսիաներ սովորողների ճանաչողությունը բարձրացնելու նպատակով: Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Շաբաթական՝ 2 ժամ

Տարեկան՝ 68 ժամ

Աշխարհագրաան խնդիրների լուծում / 20 ժամ/
Նպատակը
Աշակերտը կարողանա մաթեմատիկայի միջոցով հիմնավորել ու ավելի լավ պատկերացնել աշխարհագրական երևույթները:
Խնդիրները
Խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մաթեմատիկական որոշակի գիտելիքներ: Արդյունքում խորանում է միջառարկայական կապերը:
Վերջնարդյունքներ
Աշակերտը կկարողանա լուծել աշխարհագրական խնդիրներ, կզարգացնի սովորողի

կարողունակությունները և հմտությունները:
Բովանդակություն
. Խնդիրներ Ֆիզիկական աշխարհագրությունից /10 ժամ/
1. Խնդիրներ՝ երկրի ձևը և չափերը (3 ժամ)
2. Խնդիրներ՝ երկրի օրական և տարեկան շարժումը (3 ժամ)
3. Խնդիրներ ջրոլորտ թեմայից (2 ժամ)
4. Խնդիրներ մթնոլորտ թեմայից (2 ժամ)
.
. Խնդիրներ Տնտեսական աշխարհագրությունից /10 ժամ/
1. Խնդիրներ բնակչություն թեմայից (2 ժամ)
2. Խնդիրներ բնական ռեսուրսներ թեմայից (2 ժամ)
3. Խնդիրներ արդյունաբերություն թեմայից (2 ժամ)
4. Խնդիրներ գյուղատնտեսություն թեմայից (2 ժամ)
5. Խնդիրներ տրանսպորտ թեմայից (2 ժամ)
Գործնական աշխատանքներ աշխարհագրությունից
Ուրվագծային քարտեզների լրացման առանձնահատկությունները / 4 ժամ/
Նպատակը
Սովորողը պետք է կարողանա ճիշտ և գեղեցիկ լրացնել ուրվագծային քարտեզները, կարողանան տիրապետել ուրվագծի լրացման նրբություններին:
Խնդիրները
Կերպարվեստից սովորած սկզբունքները կարողանան ճիշտ օգտագործել և տիրապետել պայմանական նշանների համակարգին:
Վերջնարդյունքները
Օգտվելով պայմանական նշանների համակարգից, կերպարվեստից ստացած հմտություններից՝ լրացնել ուրվագծերը, զարգացնել սովորողի կարողունակությունները:
Բովանդակությունը
1. Ուրվագծել աշխարհի քաղաքական քարտեզը (2 ժամ)
2. Անցկացնել պայմանական նշանների օգնությամբ աշխարհագրական օբյեկտները (2 ժամ)
Կողմնորոշում տեղանքում / 8 ժամ/
Նպատակը
Սովորողը պետք է կարողանա կողմնորոշվել տեղանքում՝ ազատ օգտվելով կողմնացույցից, շրջապատի առարկաներից, արևից, աստղերից: Կարողանան տեղագրական քարտեզով աշխատել ,որն այդքան արդիական է հիմա:
Խնդիրները
Քանի որ այս ամենը սովորողը ուսումնասիրում է նաև ՆԶՊ դասերից ,կարելի է անցկացնել ինտեգրված դաս, որպեսզի ավելի լավ տպավորվի: Բաց դաշտում պրակտիկ ձևով կողմնորոշվել:
Վերջնարդյունքները
Սովորողը կկարողանա օգտվել կողմնացույցից, ազատ կողմնորոշվել տեղանքում, նախորոք ուսուցչի կողմից ստացած հանձնարարությամբ: Տեղագրական քարտեզներով գործնական աշխատանք անցկացնել:
Բովանդակությունը

1. Կողմնորոշում շրջապատի առարկաներով՝ ծառի կոճղ, ծառի սաղարթ (1 ժամ)	
2. Կողմնորոշում արեգակով, աստղերով (1 ժամ)	
3. Կողմնորոշում կողմնացույցով (2 ժամ)	
4. Կողմնորոշում տեղագրական քարտեզով (2 ժամ)	
5. Նախապատրաստվել գործնական աշխատանքի տեղագրական քարտեզով (2 ժամ)	
Գործնական աշխատանք տեղագրական քարտեզով / 11 ժամ/	
Նպատակը	
Աշակերտը պետք է կարողանա օգտվել տեղագրական քարտեզից, աշխատանք կատարի նրա հետ, որոշի մասշտաբը, դիրեկցոն անկյունը, կազմի պրոֆիլ և կատարի այլ աշխատանքներ:	
Խնդիրները	
Բոլոր աշխատանքները պետք է կատարել գործնական, որպեսզի լավ տպավորի և ծագած հարցերը լուծվի : Այս աշխատանքների նշանակությունը կայանում է նրանում, որ այս ամենը գինվորների համար շատ կարևոր է :	
Վերջնարդյունքները	
Աշակերտը կկարողանա այս կերպ զարգացնի իր հմտությունները և կարողունակությունները: Հաշվարկները կատարի՝ օգտվելով մաթեմատիկական հմտություններից ու հասկանա, որտեղ կարող է օգտագործել սովորածը:	
Բովանդակությունը	
1. Օգտվելով մասշտաբից՝ որոշել 2 կետերի միջև եղած հեռավորությունը : (1 ժամ)	
2. Որոշել գետի իրական երկարությունը կուլվիմետրի օգնությամբ : (1 ժամ)	
3. Որոշել լճի իրական մակերեսը պալետկայի միջոցով: (1 ժամ)	
4. Որոշել դիրեկցոն անկյունը: (2 ժամ)	
5. Որոշել հորիզոնականների միջոցով կետերի հարաբերական բարձրությունները (2 ժամ):	
6. Որոշել լեռան լանջի թեքությունը հորիզոնականների միջոցով: (2 ժամ)	
7. Պրոֆիլի կառուցում : (2 ժամ)	
Քարտեզի նշանակությունը՝ 3 ժամ V	
Նպատակը	
Մովորողը պետք է կարևորի քարտեզի նշանակությունը և անհրաժեշտությունը: Կարողանա պայմանական նշանների օգնությամբ կարդա քարտեզը:	
Խնդիրները	
Տարբեր քարտեզներում օգտագործում է տարբեր պայմանական նշաններ, որոնցից պետք է օգտվի արհեստավարժ:	
Վերջնարդյունքները	
Կկարողանա տարբերել քարտեզագրական պրոեկցիաները, պայմանական նշանները: Թեմատիկ քարտեզների պայմանական նշաններից օգտվելով , որոշակի տեղեկություն ստանալ թեմայի վերաբերյալ: Կկարողանա օգտվել լեգենդայից, բացատրի ինչ է քարտեզագրական գեներալիզացիան:	
Բովանդակությունը	
1. Քարտեզագրական պրոեկցիաների առանձնահատկությունները և տեսակները (1 ժամ)	
2. Պայմանական նշանների համակարգ (1 ժամ)	
3. Մովորել կարդալ քարտեզ (1 ժամ)	
Օդերևութաբանական կայանների տվյալների մշակում՝ 5 ժամ	

Նպատակը	
Կարողանան օդերևույթաբանական կայանից վերցրած տվյալները մշակել և դրանից կատարել որոշակի հետևություն:	
Խնդիրները	
Պետք է ճանաչեն կայանի սարքավորումները, նրանցից օգտվելու կանոնները: Տվյալների մշակումը կատարեն ըստ անհրաժեշտ չափանիշի: Կարելի է դպրոցին կից կառուցել փոքր օդերևույթաբանական կայան, որտեղ աշակերտները պարբերաբար կայցելեն և տվյալներ կհավաքեն:	
Վերջնարդյունքները	
Աշակերտը կկարողանա տվյալները մշակել ,կազմել քամու վարդը, դիագրամները ,չափել տեղումների քանակը: Լուծել խնդիրներ:	
Բովանդակությունը	
1. Այցելություն օդերևույթաբանական կայան	(2 ժամ)
2. Կառուցել քամիների վարդը	(1 ժամ)
3. Կառուցել կլիմայական քարտեզագրամ	(1 ժամ)
4. Որոշել մեր բնակավայրում եկած տեղումների քանակը	(1 ժամ)
Բնապահպանական իրատեսական ծրագրերի կազմում և իրագործում՝ համագործակցելով դպրոցի , գյուղապետարանի և համայնքի անդամների հետ՝ 8 ժամ	
Նպատակը	
Աշակերտների մոտ դաստիարակել բնապահպանություն, սրտացավ վերաբերմունք դեպի հարազատ բնակավայրը: Սովորացնել խմբային աշխատանք և համագործակցություն այլ կառույցների հետ:	
Խնդիրները	
Մաքրության պահպանման համար պետք է ընդգրկեն դպրոցի աշակերտներին և համայնքի բնակիչներին: Աղբամաներ տեղադրելը կպահանջի որոշակի գումար և ժամանակ:	
Վերջնարդյունքը	
Կկարողանան ընդգրկել աշակերտներին և համայնքի բնակիչներն մաքրության պահպանմանը, խմելու ջրի խնայման , հողերի պահպանման կարևոր գործի մեջ , ունենալով համայնքապետի աջակցությունը:	
Բովանդակությունը	
1. Դպրոցի մաքրության պահպանումը	(2 ժամ)
2. Գյուղի մաքրության պահպանումը	(2 ժամ)
3. Խմելու ջրի պահպանում մեր բնակավայրում	(2 ժամ)
4. Հողերի պահպանումը մեր բնակավայրում	(2 ժամ)
Կապը այլ առարկաների հետ: Տեսողական զարգացում՝ 9 ժամ	
Նպատակը	
Միջառարկայական կապի ստեղծումը ծառայեցնել աշակերտների տեսողական զարգացմանը: ՏՀՏ –ների օգտագործումը աշխարհագրության դասերին: https://docs.google.com/presentation/d/1QT13RMavjnz2FwgH2ONnjjtHOUaKNvY6/edit#slide=id.p1	
Խնդիրները	
Աշակերտը պետք է որոշակի գիտելիք ունենա համակարգչից, որ կարողանա այն	

գարգացնել:Պետք է աշխատել ինֆորմատիկայի ուսուցչի հետ:
<https://docs.google.com/presentation/d/1-LKiWEQibt3g89d74dGcWvBwdY-qp19n/edit#slide=id.p3>

Վերջնարդյունքը

Աշակերտը կկարողանա կազմել տարբեր թեմաներով սահիկահանդեսներ,դասեր էլեկտրոնային գրատախտակով,որը ավելի կամրապնդի գիտելիքները:

https://docs.google.com/presentation/d/128fcyZYzh9_wNGnRukHgvOHCzhBf3tnN/edit#slide=id.p1

Բովանդակությունը

- 1.Սահիկահանդեսի կազմում համակարգչի օգնությամբ (3 ժամ)
- 2.Աշխարհագրության դասերի կազմում էլեկտրոնային գրատախտակի միջոցով (3 ժամ)
- 3.Խմբակի հաշվետու միջոցառում (3 ժամ)

Խմբակի վերջնական նպատակն է սովորածը տեսնել և օգտագործել բնության մեջ:Դա կարելի է իրականացնել էքսկուրսիաների միջոցով,որը կարող ենք անցկացնել ամառային արձակուրդների և դասերի ընթացքում:Էքսկուրսիաները կիրականացվի աշակերտների,ծնողների միջոցներով:

էքսկուրսիա դեպի Քարե լիճ

նպատակը

Գեմորֆոլոգիական հետազոտություն,ալպյան գորգերի ուսումնասիրություն, ծանոթանալ բարձրադիր օդերևութաբանական կայանի աշխատանքներին:

խնդիրները

Մակերևույթի ձևերի առաջացման պատճառները,արոտավայրերի դեգրեդացիա, բարձրադիր օդերևութաբանական կայանի աշխատանքների դժվարությունները:

վերջնարդյունքը

Կարողանան տարբերել սառցադաշտային ծագման մակերևույթը, արոտավայրերի դեգրեդացիան կանխելու միջոցները,կծանոթանան օդերևութաբանական կայանի սարքավորումների և նրանց աշխատանքների հետ:

էքսկուրսիա դեպի Դենդրոպարկ

նպատակը

Ճանաչել հայրենի բնությունը: Բնության պահպանում

խնդիրները

Հատվում են անտառները ,վերանում են արժեքավոր ծառատեսակները,առաջանում են սողանքներ

վերջնարդյունքը

Ծանոթանան և տարբերեն լայնատերև և փշատերև ծառատեսակները,կարողանան բացատրել նրանց տարածման արեալների փոփոխությունները ըստ բարձրության:

էքսկուրսիա դեպի Թռչկանի ջրվեժ

նպատակը

Պահպանել բնական հուշարձանները

խնդիրները

Էլեկտրակայան կառուցելու համար փոխում են գետի հունը,որի պատճառով ջրվեժը վերանում է:

վերջնարդյունքը
Կժանոթանան տեղանքին ,կհաշվեն գետի ծախսը,կտեսնեն արդյոք կայանը կարդարացնի իր ծախսերը,կգտնեն այլընտրանքային տարբերակ:
Էքսկուրսիա դեպի Մոզրովի քարանձավ
նպատակը
Պահպանել բնական հուշարձանները և անհետացող կենդանիներին (էնդեմիկ չղջիկներին)
խնդիրները
Քրանձավը, եթե դարձնեն զբոսաշրջային կենտրոն,ապա չղջիկները կվերանան:
վերջնարդյունքը
Կարողանան գնահատել քարանձավի նշանակությունը, չղջիկների տարածման արեալը,որոշեն, թե որի պահպանումն է ավելի կարևոր:
Էքսկուրսիա դեպի Սևանի ազգային պարկ
նպատակը
Տեսնեն, թե ինչու և ինչքան է իջել Սևանի մակարդակը,ինչ բնապահպանական խնդիրներ են առաջացել Սևանի մակարդակը իջնելու հետևանքով:
խնդիրները
Ջրի մակարդակի իջեցման պատճառով աճել են կապտականաչ ջրիմուռները,վերանում է իշխան ձուկը,լիճը <<ծաղկել >>է :
վերջնարդյունքը
Կկարողանան տեղում ականատես լինել ջրի աղտոտմանը,կտեսնեն, թե վերջին ժամանակներում ջրի մի փոքր բարձրացման հետևանքով ինչպես են ջրի մեջ հայտնվել ազգային պարկի ծառերը,որը ավելի են աղտոտում լիճը:Կգնահատեն ,որ ազգային պարկում կարելի է կատարել տնտեսական գործունեություն այնպես, որ բնությունը չտուժի:
Էքսկուրսիա դեպի Տաթևի վանական համալիր,Գառնիի հեթանոսական տաճար, Գեղարդի վանքը և այլն
նպատակը
Ճանաչողական էքսկուրսիան նախատեսում է դաստիարակել հայրենասիրություն, <<Ճանաչել հայրենիքը>> խորագրով:
խնդիրները
Պահպանել ճարտարապետական կոթողները,նրանց վերականգնումը: Բոլոր կոթողները ընդգրկել զբոսաշրջության մեջ:
վերջնարդյունքը
Կկարողանան գնահատել կոթողների վիճակը,նրանց տանող ճանապարհների վիճակը,զբոսաշրջության մեջ ընդգրկելու կարևորությունը և հնարավորությունը:

